ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի նոյեմբերի 1-4-ը շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Տիգրան Գաբրիելյանի Շվեյցարիայի Համադաշնություն (ք" Ժնև) գործուղման արդյունքների վերաբերյալ

1" ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Տիգրան Գաբրիելյան

2"ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

3"ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Շվեյցարիայի Համադաշնություն (ք. Ժնև), 2022 թվականի նոյեմբերի 1-4-ը:

4" ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպություն (այսուհետ՝ ՀՕԿ)

5" ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն ՀՕԿ Տարածաշրջանային ասոցիացիայի VI-ի տարածաշրջանային համաժողովին:

6" ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Համաժողովը կազմված էր հետևյալ նստաշրջաններից՝

ա) ՀՕԿ-ը և նրա հիմնական առաջնահերթությունները.

- Վաղ նախազգուշացում բոլորի համար
- Ջերմոցային գազերի մոնիթորինգ

• Տվյալների միասնական քաղաքականություն

բ) Ենթակառուցվածք՝ հետազոտությունների և ծառայությունների համար

- Միջին հեռավորության եղանակի կանխատեսումների եվրոպական կենտրոն՝ հաջողված եվրոպական ենթակառուցվածքի հարմարեցում ապագա կարիքների համար
- Տարածական տեղեկատվության ենթակառուցվածքը Եվրոպայում՝ քաղված դասերը և ԵՄ-ում տվյալների փոխանակման քաղաքականության էվոլյուցիան

գ) Ծառայությունների ոլորտում հետազոտական գործունեությունը որպես Ազգային հիդրոօդերևութաբանական ծառայությունների (այսուհետ՝ ԱՀՕԾ) հիմնական ուղղություններից մեկը

- ԵՄ հետազոտական ենթակառուցվածքը, ակադեմիական և հասարակական հատվածի համագործակցությունը
- ԱՀՕԾ-ներում արդյունավետ ծառայություններ արտադրելու համար հետազոտությունից մինչև ծառայություններ արժեքային շղթայի օգտագործում

դ) ԱՀՕԾ-ների հիմնական գործունեությանն աջակցելու համար ծառայություններ

- Եվրոպական վաղ նախազգուշացման համակարգեր. ներկան և ապագան
- Հիդրոլոգիան ՀՕԿ Տարածաշրջանային ասոցիացիա VI-ում. ենթակառուցվածք, հետազոտություն, ծառայություններ, համագործակցություն մասնավոր և ակադեմիական հատվածների հետ
- ՀՕԿ Տարածաշրջանային ասոցիացիա VI-ի համագործակցության տեսլականը ենթակառուցվածքների, ծառայությունների և հետազոտությունների ոլորտում՝ հիմնված Երկրի համակարգի վրա. ԱՀՕԾ-ների ապագան

ե) «2021թ. կլիմայական իրավիճակը Եվրոպայում» զեկույցի շնորհանդես

- ՀՕԿ Գլխավոր քարտուղար Փ. Թաալասի համագործակցության կոչը՝ նվիրված «2021թ. կլիմայական իրավիճակը Եվրոպայում» զեկույցի կազմմանը՝ որպես ՄԱԿ 2030 օրակարգին (ԿԶՆ 13) աջակցություն
- «2021թ. կլիմայական իրավիճակը Եվրոպայում» զեկույցի շնորհանդես

- Բարձր մակարդակի պանելային քննարկում"համագործակցությունը կլիմայի փոփոխության, աղետների ռիսկի նվազեցման հարցերում՝ որպես ԿԶՆ իրականացում

զ) Բաց խորհրդատվական պլատֆորմի վերաբերյալ տարածաշրջանային ֆորում (պետական, մասնավոր, գիտական սեկտորների ներգրավվածություն)

- ԱՀՕԾ-ների համագործակցությունը միմյանց միջև, ինչպես նաև պետական և ակադեմիական հատվածի հետ
- Պետություն – մասնավոր հատված համագործակցություն

է) Ապագայի ԱՀՕԾ-ներ՝ առաջնորդություն և կառավարում

ը) Ռազմավարություն և օրենսդրություն

- ՄԱԿ-ի Կայուն զարգացման 2030թ" օրակարգ՝ առաջընթաց և մարտահրավերներ
- Ջրի և կլիմայի կոալիցիա" առաջնորդություն և ներգրավվածություն
- ՀՕԿ կարողությունների զարգացման ռազմավարություն:

Համաժողովի ընթացքում անցկացվել են բարձր մակարդակի քննարկումներ վերը նշված թեմաների շուրջ, ինչի արդյունքները որպես առաջարկություններ ընդգրկվել են 2023 թվականին կայանալիք բարձր մակարդակի նախարարական հանդիպման Խորհրդատվական փաստաթղթում:

7" ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ

«2021թ. կլիմայական իրավիճակը Եվրոպայում» զեկույցի շնորհանդեսին նվիրված նիստի ընթացքում Տիգրան Գաբրիելյանը հանդես է եկել «2021թ. կլիմայական իրավիճակների փոփոխությունը Հայաստանի Հանրապետությունում» զեկույցով:

Կայացել են հանդիպումներ"

- *ՀՕԿ Գլխավոր քարտուղարի տեղակալ Ելենա Մանաենկովայի հետ:*
- *ՀՕԿ Գլխավոր քարտուղարի օգնական Ուենջիան Ջհանգի հետ:*
- *ՀՕԿ քարտուղարության Անդամ-երկրների սպասարկման և զարգացման դեպարտամենտի տնօրեն Ֆիլիպե Լուչիոյի հետ, ով համակարգում է նաև տարածաշրջանային ասոցիացիաների աշխատանքը:*

Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել կազմակերպել ՀՕԿ ոլորտային փորձագետների առաքելության այցելություն Հայաստանի Հանրապետություն, մասնավորապես, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ: Փորձագետների այցը կընդգրկի հետևյալ ուղղությունները՝

ա/ ձեռքով կատարվող դիտարկումներից ավտոմատի անցում՝ հիդրոօդերևութաբանական ցանցի օպտիմիզացիայի նպատակով,

բ/ օպերատիվ հիդրոօդերևութաբանություն,

գ/ պետություն-մասնավոր ոլորտ համագործակցություն,

դ/հիդրոօդերևութաբանական սպասարկման արդյունավետ կազմակերպում և օդերևութաբանական կանխատեսումների բարելավում,

ե/ ՀՕԿ հովանու ներքո իրականացվող IG3IS (Ջերմոցային գազերի ինտեգրված գլոբալ տեղեկատվական համակարգ) ծրագրում Հայաստանի ընդգրկում, համապատասխան ծրագրային հայտի կազմում և ներկայացում դոնոր կազմակերպություններին,

զ/ Երևանի աէրոլոգիական կայանին տեխնիկական աջակցության տրամադրում,

է/Գյուղատնտեսության ոլորտի մասնագետների համար ագրոօդերևութաբանության սպասարկման, տեղեկատվական սեմինարի կազմակերպում:

Համաժողովի ընթացքում տեղի են ունեցել նաև երկկողմանի հանդիպումներ մի շարք ԱՀՕԾ-ների ղեկավարների հետ, մասնավորապես՝ Վրաստանի, Ռումինիայի և

Էստոնիայի: Արդյունքում վերջիններիս հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել համագործակցության խթանման համար ստորագրել փոխըմբռնման հուշագրեր:

8" ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Համաժողովի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունները ներկայացված են Հաշվետվության 7-րդ կետի ներքո:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ՝

Recoverable Signature

X

ՏԻԳՐԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Signed by: GABRIELYAN TIGRAN 2211780245

Տիգրան Գաբրիելյան

08"11"2022թ"